# Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հաշվետվություն

Beeline 2016

Beeline®

# Ընկերության մասին

Beeline-ը Հայաստանի խոշորագույն ինտեգրված հեռահաղորդակցության ընկերությունն է: Հիմնադրվել է 1995թ-ի մարտ ամսին ամերիկյան Trans-World Telecom ընկերության հետ համատեղ: 2006թ-ի նոյեմբերի 3-ից աշխարհի խոշորագույն ինտեգրված օպերատորներից մեկի՝ ՎԵՌՆ-ի (նախկինում «Վիմպել Կոմ Լթդ») Ընկերությունների խմբի մի մասն է:

# Տվյալներ Ընկերության ծառայությունների մասին

- GSM, 3G և 4G (LTE) ստանդարտի շարժական կապ Հայաստանի ողջ տարածքում, ամրակցված հեռախոսակապի ծառայություններ:
- Ինտերնետի հասանելիություն CDMA, ADSL և FTTB տեխնոլոգիաներով :
- ՀՀ-ում 3G երրորդ սերնդի բջջային ցանցը շահագործած առաջին բջջային օպերատոր:
- 1 Գբիթ/վրկ թողունակությամբ Beeline հուսալի CDN ենթակառուցվածք:
- 100% թվայնացված հեռախոսակապ Երևանում:
- 90 %-ին մոտ թվայնացման ցուցանիշ ՀՀ-ի ողջ տարածքում:
- Ավելի քան 9000 կմ երկարությամբ լարային ենթակառուցվածք:

# Beeline-ի ձեռքբերումները 2016 թ-ին

- 4G (LTE) ցանցի գործարկում:
- Սակագների նշանակալի նվազեցում:
- IPTV ինտերնետային հեռուստատեսություն. IPTV ծառայությունը հասանելի է Հայաստանի Beeline ֆիքսված կապի բաժանորդների գրեթե 80 տոկոսին:
- Ավելի քան 880 000 բջջային կապի բաժանորդ:
- Beeline-ի բրենդային սմարթֆոնները 2016թ.-ին Հայաստանում ամենաշատ վաճառված հեռախոսների թվում են:
- 13,65 մլն. ԱՄՆ դոլարի ներդրում:
- 12,4 մլրդ. դրամը գերազանցող հարկային վճարումներ 2016թ-ին:
- Հայաստանի 5 բնակավայրերի հեռախոսային ցանցի թվայնացում:
- Beeline-ը հնարավորություն ընձեռեց Հայաստանի բոլոր բնակիչներին անվճար զանգեր կատարել Beeline քարտային հեռախոսներից դեպի Beeline-ի ֆիքսված ցանց ողջ Հայաստանում:

- Հանդիսանում է Հայաստանի խոշոր հարկատուներից և գործատուներից մեկը:
- Beeline-ն այսօր Հայաստանում ունի ամենախոշոր վաճառքի և սպասարկման գրասենյակների ցանցերից մեկը: Beeline-ը հատկապես կարևորում է սպասարկման որակի բարելավումը, ինչի շնորհիվ հաճախորդները կարող են միանալ Beeline-ին և օգտվել պարզ ու հարմար ծառայություններից ավելի հարմարավետ պայմաններում:
- Beeline-ի թիմը միշտ սատարում է այն նոր գաղափարների նախաձեռնությունների իրականացմանը, որոնք օգնում են մարդկանց կյանքը դարձնել ավելի լավը:
- Beeline-ը հպարտանում է սեփական կորպորատիվ համալսարանով, աշխատակիցների կարիերայի աճի ու զարգացման հնարավորություններով:

# Beeline-ի կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը

Որպես Հայաստանի խոշորագույն հեռահաղորդակցության ինտեգրված օպերատոր և սոցիալապես պատասխանատու ընկերություն՝ Beeline-ը շարունակական աջակցություն է ցուցաբերում հասարակությունում առկա տարբեր խնդիրների լուծմանը՝ իր ներդրումն ունենալով բարեկեցիկ ապագայի կերտման գործում: Ընկերությունը կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (ԿՍՊ) ռազմավարությունն իրականացնում է «Beeline-ն օգնում է մարդկանց կյանքը դարձնել ավելի լավը» և «Օգնել երիտասարդներին կառուցել իրենց ապագան» խորագրերի ներքո:

ԿՍՊ նշանակալի ուղղությունները սահմանելու համար Beeline-ն ուսումնասիրում է հասարակական պահանջները, հաղորդակցվում է առաջնորդների,

պետական ներկայացուցիչների հետ՝ երկրում առաջնահերթ և հրատապ սոցիալական հարցերի լուծման մեջ իր ներդրումն ունենալու համար: Սոցիալական ռազմավարության իրականացման հարցում Beeline-ը հավատարիմ է ընտրված ուղղություններին, իսկ սոցիալապես պատասխանատու մոտեցումը ընդգրկված է ընկերության բիզնես գործընթացներում:

2016 թ-ին Beeline-ն իր սոցիալական ծրագրերն իրականացրել է ողջ ՀՀ տարածքում: Շարունակական աշխատանքի արդյունքում մենք ձեռք ենք բերել մեկ կարևոր հմտություն. իրականություն դարձնել մեր գաղափարները և հասնել լավագույն արդյունքների, իսկ յուրաքանչյուր աշխատակցի, հաճախորդի և շուկայում առկա գործընկերների հանդեպ ազնիվ և արդար վերաբերմունքը դարձել է մեր հաջողության երաշխիքը:

# ԿՍՊ հաշվետվության մասին

Հաշվետվությունն ընթերցողին ծանոթացնում է Beeline–ի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ռազմավարությանը, դրա առանցքային ուղղություններին և 2016թ–ին իրականացված նախագծերին՝ ներկայացնելով դրանց արդյունավետությունն առկա խնդիրների լուծման գործում:

Հաշվետվությունը նպատակ ունի ապահովելու թափանցիկություն Ընկերության բիզնես գործընթացների, հասարակական գործողությունների և շահագրգիռ կողմերի հետ հաղորդակցության սկզբունքների վերաբերյալ:

## 2016թ-ի Beeline-ի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հիմնական ուղղություններն են՝

1. Մանկապատանեկան և կրթական ծրագրեր
2. Մշակույթ և կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն
3. Նորարարության և բարձր տեխնոլոգիաների զարգացմանն ուղղված ծրագրեր
4. Երիտասարդության և կարիերայի խթանմանն ուղղված ծրագրեր
5. Համայնքների զարգացմանն ուղղված ծրագրեր
6. Make your mark/ Թող քո հետքը

# 1 Մանկապատանեկան և կրթական ծրագրեր

2016թ-ին Beeline-ն իրականացրեց մի շարք նախագծեր՝ ուղղված երեխաների պաշտպանությանը, կրթության բարելավմանը, զարգացմանը և էսթետիկ դաստիարակությանը:

*«Երեխաները մշտապես գտնվում են Beeline-ի ուշադրության կենտրոնում, և մենք ուրախ ենք աջակցել այն միջոցառումներին, որոնք օգնում են երեխաների կյանքը դարձնել ավելի լավը և նրանց համար կերտել պայծառ ապագա»:*

Հայաստանում Beeline-ի Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախին

# Մանկապատանեկան և կրթական ծրագրեր

## Համագործակցություն Մանկական զարգացման հիմնադրամի հետ

2016թ-ին Beeline-ը Մանկական զարգացման հիմնադրամի հետ համատեղ թողարկեցին երկու հայալեզու բջջային խաղ-հավելվածներ՝ «Our Day» և «Let's think»՝ դպրոցական և նախադպրոցական տարիքի երեխաների համար, այդ թվում՝ հատուկ կարիքներ ունեցող երեխաների: Հավելվածները ստեղծվել են «Գիտելիք հանուն բարեկեցության» ծրագրի շրջանակում և անվճար հասանելի են Google Store մարքեթում:

# Մանկապատանեկան և կրթական ծրագրեր

2016թ-ին Beeline-ի աջակցությամբ մեկնարկեց նաև «Երեխաների խոսքի ուժը» ծրագիրը: Ծրագրի նպատակն է օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաների հնարավորությունները զարգացնել երեխաների և պատանիների ստեղծագործ, քննադատական և այլընտանքային մտածողությունը, բարձրացնել ծնողների և համայնքի բնակիչների իրազեկվածությունն երեխաների բարեկեցության վերաբերյալ: Ծրագիրն իրականացվեց Արարատի, Վայոց Ձորի և Տավուշի մարզերի Նոր Խարբերդ, Մյնթափ, Եղեգնաձոր, Վայք, Իջևան և Դիլիջան համայնքներում:

Ծրագրի շրջանակում հանդիսավոր արարողությամբ ստորագրվեց եռակողմ փոխըմբռնման հուշագիրը, որը խթանեց երեխաների պաշտպանության ոլորտում արդյունավետ եռակողմ համագործակցության գործընթացը Հայաստանում:

# Մանկապատանեկան և կրթական ծրագրեր

*«Կրթվելու և զարգանալու պայմանները պետք է հավասար լինեն յուրաքանչյուր երեխայի համար, քանի որ երեխան է հանդիսանում համայնքի զարգացման երաշխիքը և պետության վաղվա քաղաքացին»:*

Հայաստանում Beeline-ի Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախին:

Beeline-ի կողմից 2015 թ. ապրիլ ամսին գործարկված «0-8000-1007» վստահության հեռախոսահամարին 2016 թվականի ընթացքում իրականացվել է գրեթե 1000 զանգ: Զանգերը գրանցվել են ինչպես Երևանից, այնպես էլ հանրապետության մարզերից՝ մասնավորապես Լոռիից, Շիրակից և Արարատից:

# Մանկապատանեկան և կրթական ծրագրեր

## Կրթական ծրագրեր

2016-ի մարտ-ապրիլ ամիսներին Beeline-ի մասնակցությամբ և աջակցությամբ կազմակերպվեց կրթական հաստատությունների և կրթական ոլորտի նվաճումների «Կրթությունը XXI դարում» Expo 2016 միջազգային մասնագիտացված ցուցահանդեսը, որին մասնակցում էր ավելի քան 60 կազմակերպություն, այդ թվում՝ Ռուսաստանի Դաշնության ավելի քան 10 բարձրագույն և մասնագիտական կրթական հաստատություն, տասնյակ համալսարաններ, ինստիտուտներ, քոլեջներ և մասնագիտական ուսումնարաններ:

Սահմանամերձ գյուղերի երեխաների և պատանիների կրթությունը խթանելու համար Beeline-ը շրջայց կազմակերպեց Beeline-ի Կապի թանգարան, Հաճախորդների սպասարկման կենտրոն, ինչպես նաև Երևանի «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն:

# Մանկապատանեկան և կրթական ծրագրեր

**Beeline-ի, «Հայրենիքի դարպասներ» ՀԿ-ի և «Ռումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի համատեղ ծրագրի շնորհիվ ավելի քան 70 երեխա Տավուշի մարզի 12 սահմանամերձ համայնքներից 2015թ-ից ի վեր այցելում են Դիլիջանում գտնվող «Ռումո» կենտրոն և մասնակցում անիմացիայի, ֆիլմերի, խաղերի ստեղծման, կայքերի մշակման և գրաֆիկական դիզայնի դասընթացների:**

*«Գաղտնիք չէ, որ պատանիներն ու երիտասարդները երկրի ապագան են ու նաև ներկան: Մենք շատ ենք փորձել և փորձում սահմանամերձ գյուղերում ինչ-որ բան անել, բայց ոչ ոք դա չի կարող անել ավելի լավ, քան այդ գյուղերում*

# Մանկապատանեկան և կրթական ծրագրեր

*մեծացած և ապրող երիտասարդները»:*

«Հայրենիքի դարպասներ» սոցիալական հասարակական կազմակերպության նախագահ Արման Հայրապետյան:

## Համագործակցություն Գաֆեսճյան արվեստի կենտրոնի հետ

2016-ին Beeline-ի և Գաֆեսճեան արվեստի կենտրոնի համագործակցության արդյունքում ավելի քան 2400 երեխա մասնակցել է կրթական միջոցառումներին և մոտ 3000 այցելու օգտվել է ԳԱԿ-ի Ինտերակտիվ ուսումնական կենտրոնից:

Իրականացվեց նաև «Սասունցի Դավիթի ճանապարհով» նոր կրթական ծրագիրը՝ Արտաշես Հովսեփյանի «Սասունցի Դավիթ» որմնաքանդակի ցուցադրության շրջանակում, որի

# Մանկապատանեկան և կրթական ծրագրեր

ընթացքում փոքրիկ նկարիչները ստեղծեցին հայ էպոսի դրվագների իրենց նկարազարդումները, որոնք այնուհետև լույս տեսան առանձին գրքով:

## Երեխաների պաշտպանության միջազգային օր

Երեխաների պաշտպանության միջազգային օրը՝ հունիսի 1-ին, Beeline-ի աջակցությամբ Ալեքսանդր Թամանյանի անվան Ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտում տեղի ունեցավ Beeline-ի գործընկեր՝ Էդուարդ Միրզոյանի անվան լարային քառյակի բարեգործական համերգը:

2

# Մշակույթ և կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն

*«Մշակույթն այն հզոր գործիքն է, որի միջոցով մեր երկրի անունը հնարավոր է առավելագույնս հասանելի ձևով ներկայացնել լայն հանրությանը: Ուրախ ենք, որ մեր կողմից իրականացված ծրագրերը կարողանում են շարունակել մշակույթի զարգացմանն ուղղված մեր առաքելությունը»:*

Հայաստանում Beeline-ի Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախին:

# Մշակույթ և կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն

## Բրիտանական ֆիլմերի 14-րդ փառատոն

2016-ին Երևանում և մարզերում անցկացվեց արդեն ավանդական դարձած Բրիտանական ֆիլմերի փառատոնը՝ թվով 14-րդը, որը կրում էր «Լավագույնը Բրիտանիայից» կարգախոսը:

Բրիտանական ֆիլմերի ամենամյա փառատոնը հանրապետության մշակութային կյանքի կարևոր բաղադրիչներից է, որն իր շուրջն է համախմբում բրիտանական կինոյի սիրահարներին՝ նրանց հնարավորություն տալով դիտել հեղինակավոր մրցանակ-

ների արժանացած և վերջին տարիների արտադրության բրիտանական ֆիլմեր:

Փառատոնի կազմակերպիչներն են Բրիտանական խորհուրդը, Երևանում Բրիտանական դեսպանատունը և ՀՀ Մշակույթի նախարարությունը, փառատոնի գլխավոր հովանավորն է Beeline-ը Հայաստանում: Փառատոնի շրջանակում մայրաքաղաքում և մարզերում՝ Սպարան, Դիլիջան և Ալավերդի քաղաքներում, ցուցադրվեց յոթ ֆիլմ: Եվս երկու ֆիլմ ցուցադրվեցին Երևանի Փոքր թատրոնում, որոնց թվում էր «Մաքսին Փիքի Համլետը»՝ ցուցադրված Շեքսպիրի մահվան 400-րդ տարին նշանավորող միջոցառումների շրջանակում: Փառատոնի հատուկ հյուրն էր միջպլատֆորմային արվեստագետ, ռեժիսոր Սայմոն Ուիլքինսոնը: Ընդհանուր առմամբ՝ փառատոնին մասնակցեց ավելի քան 25.000 մարդ:

> *«Մենք ուրախ ենք, որ փառատոնը դարձել է սիրված ու սպասված իրադարձություն հայաստանյան մշակութային կյանքում: Ես ինքս հաճախ այցելում եմ և դիտում այդ ֆիլմերը և տարեցտարի ականատես եմ լինում երիտասարդների ներգրավվածության աճին և դրական փոփոխություններին»:*
> Հայաստանում Beeline-ի ՀՀԿ Մենեջեր Նաիրա Նազարյան:

Բրիտանական ֆիլմերի փառատոնի փակման արարողությանն ամփոփվեցին նաև ավանդական դարձած մրցույթների արդյունքները՝ Լավագույն գրախոսականի և BestofBritish Selfie:

# Մշակույթ և կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն

## «Հուսո առագաստ 2016»

2016-ին Beeline-ի աջակցությամբ անցկացվեց «Հուսո առագաստ 2016» համահայկական երկրորդ փառատոնը, որը նպատակ ունի բացահայտել ասպարեզում նորանուն հեղինակ-կատարողների, բեմ տրամադրել և նպաստել նրանց ստեղծագործական առաջընթացին:

Փառատոնը տեղի ունեցավ հուլիսի 15-17-ը Գեղարքունիքի մարզի Հորժա գյուղի մոտ գտնվող «Վիշապ» լողափում:

# Մշակույթ և կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն

Փառատոնն ավարտվեց հոկտեմբերի 1-ին՝ Յակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի ունեցած գալա համերգով, որի ընթացքում ելույթ ունեցան տարվա տասը լավագույն երիտասարդ երգահանները, ինչպես նաև ավագ սերնդի հեղինակ-կատարողներ:

«Յուսո առագաստ-2016» հեղինակային երգի համահայկական փառատոնին աջակցելու համար՝ շնորհակալագիր հանձնվեց Յայաստանում Beeline-ի Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախինին:

## Համագործակցություն «Դասական երաժշտության զարգացման» հիմնադրամի հետ

2016–2017 համերգաշրջանի մեկնարկն ազդարարեց «Դասական երաժշտության զարգացման» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների՝ Խաչատուրյանի անվան եռյակի երաժիշտների համերգը՝ նվիրված ռուս կոմպոզիտոր Դմիտրի Շոստակովիչի 110-ամյակին: Յամերգը կայացավ Beeline-ի աջակցությամբ:

Յունիսին՝ Beeline-ի աջակցությամբ Խաչատուրյանի անվան եռյակի երաժիշտները համերգներով հանդես եկան Արցախում: Յունիսի 16-ին տեղի ունեցավ շրջա-

# Մշակույթ և կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն

գայության առաջին համերգը՝ Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջում, իսկ հունիսի 17-ին՝ Հուշիի Կերպարվեստի Պետական Թանգարանում: Եռյակի երաժիշտները նաև դասընթացներ անցկացրեցին Ստեփանակերտի և Հուշիի երաժշտական դպրոցների աշակերտների համար:

2015 – 2016թթ. համագործակցության ընթացքում՝ Beeline-ի հովանավորության շնորհիվ Դասական երաժշտության զարգացման հիմնադրամը կազմակերպել է բազմաթիվ համերգներ և վարպետության դասեր Հայաստանի քաղաքներում և արտասահմանում: Տարին նշանավորվեց Լիբանանում անցկացվող միջազգային փառատոնին հիմնադրամի կողմից կրթաթոշակ ստացող երիտասարդների մասնակցությամբ:

Բացի այդ, մեկնարկեց հայկական դասական երաժշտության գլուխ-գործոցների ձայնասկավառակի ձայնագրման աշխատանքները:

# Մշակույթ և կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն

## Համագործակցություն Միրզոյանի անվան քառյակի հետ

2016-ի ընթացքում՝ Beeline-ի և Էդուարդ Միրզոյանի անվան լարային քառյակի համագործակցության արդյունքում, քառյակը հանդես է եկել 10-ից ավելի բարեգործական համերգներով և մի շարք վարպետության դասերով:

Առաձին պետք է նշել ռուսական առաջատար փողային երաժիշտների և Ռուսաստանի վաստակավոր արտիստուհի Մարիա Ֆեդոտովայի (ֆլեյտա) ելույթները թիվ 13 երաժշտական գիշերօթիկ դպրոցի սաների համար և Միրզոյանի անվան լարային քառյակի համերգը՝ նվիրված կոմպոզիտոր Էդուարդ Միրզոյանի 95-ամյակին:

2016-ի դեկտեմբերին քառյակի երաժիշտները թողարկել են երկար սպասված ձայնասկավառակ՝ է. Միրզոյանի լեգենդար «Շուշանիկ» մշակումը լարային քառյակի համար, որի իրացումից գոյացած բոլոր միջոցները կուղղվեն Արցախյան զինծառայողների ընտանիքների հիվանդ երեխաների բուժմանը:

## Թանգարանների օր

2016-ին Beeline-ը միացավ Թանգարանների օրվան նվիրված ամենամյա միջազգային ակցիային: Այժմ ամեն տարի՝ մայիսի 21-ին Beeline Կապի թանգարանի դռները բաց

# Մշակույթ և կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն

**կլինեն այցելուների առջև ժամը 17:00-ից մինչև 22:00-ն:**

*Կապի թանգարանում ներկայացված են հեռախոսային կապի և ընկերության զարգացման պատմությանը վերաբերող նյութեր, ինչպես նաև երկրում ներդրված կապի ժամանակակից տեխնոլոգիաների ցուցանմուշներ, այնպես որ այցելուները կարող են ծանոթանալ XX դդ դարից սկսած մինչև ժամանակակից թվային ֆիքսված, բջջային և ինտերնետ կապի սարքավորումներին: Կապի թանգարանը գործում է Մզատություն 24/1 հասցեում:*

3

# Նորարարության և բարձր տեխնոլոգիաների զարգացմանն ուղղված ծրագրեր

*«Կարելի է ասել, որ հեռահաղորդակցության ոլորտն ամենաարագ փոփոխվող և զարգացող ոլորտներից մեկն է, և մենք, որպես նորարար ընկերություն, մշտապես գտնվում ենք այս փոփոխությունների էպիկենտրոնում»:*

Հայաստանում Beeline-ի Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախին:

**2016-ին Beeline-ն իրականացրեց չորս մասշտաբային ծրագիր՝ ուղղված նորարարական գաղափարների բացահայտմանը և իրագործմանը:**

# Նորարարության և բարձր տեխնոլոգիաների զարգացմանն ուղղված ծրագրեր

## «Հեքըթոն»

2016-ի հոկտեմբերի 1-ին Beeline-ը և Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոն Հայաստանն Երևանում անցկացրեցին «Հեքըթոն» նորարար գաղափարների և ծրագրավորման մրցույթը: Մրցույթին գրանցված 32 թիմերից նախնական ընտրության արդյունքում «Հեքըթոնին» մասնակցեցին 17-ը: Մասնակիցները 12 ժամվա ընթացքում մշակեցին հեռահաղորդակցության ոլորտին վերաբերող տարբեր լուծումների փորձնական տարբերակներ, ներկայացրեցին իրենց գաղափարները ոլորտի մասնագետների և մենթորների դատին: Ընտրելով լավագույններին՝ հանձնաժողովը՝ որպես չափանիշ կիրառեց 12 ժամում կատարված աշխատանքը, ինչպես նաև գաղափարի նորարարությունը և հետաքրքիր լինելը: Հաղթող ճանաչվեցին ArmCover (գաղափարը՝ հեռախոսային խոսակցությունները կոդավորող և ապակոդավորող ծրագիր՝

գաղտնի տեղեկատվություն հաղորդելու համար) և TopSoft (գաղափարը՝ բարելավել հաճախորդների սպասարկումը խելացի Facebook bot-ի միջոցով) թիմերը, որոնք ստացան համապատասխանաբար 1000 և 500 դոլարին համարժեք գումարի չափով մրցանակներ: Երրորդ տեղը զբաղեցրած Ask@run թիմը Մայքրոսոֆթ ընկերության կողմից ստացավ խրախուսական մրցանակներ:

## Դիջիթոն

Beeline–ն իր աշխատակիցների շրջանում անցկացրեց Դիջիթոն նորարարական գաղափարների մրցույթը: Հայտնի Hackathon–երի նման, միջոցառումը տևում էր 24 ժամ, որի ընթացքում ընկերության աշխատակիցներից կազմված թիմերը մրցում էին, որպեսզի ստեղծեն նորարար հավելվածներ և ծառայություններ բիզնեսի և հաճախորդների համար:

> *«Մեր Դիջիթոնը հնարավորություն է ընձեռում նորարար միջավայրում ստեղծել արդի, վառ և համարձակ գաղափարներ, մշակել դրանք և ստանալ արդյունք՝ նոր առաջարկի տեսքով՝ մեր այսօրվա, վաղվա և ապագայի հաճախորդի համար»:*
>
> Հայաստանում Beeline-ի Մարդկային ռեսուրսների կառավարման և կազմակերպական զարգացման տնօրեն Մարինե Գալստյան:

# Տորարարության և բարձր տեխնոլոգիաների զարգացմանն ուղղված ծրագրեր

Որպես Դիջիթոնի մոդերատորներ և հանձնաժողովի անդամներ առաջ եկան ընկերության ղեկավարությունը, իսկ հաղթող ճանաչված BeeForce ծրագիրը մասնակցեց հուլիսին Ղրղզստանում կայացած Եվրազիա Դիջիթոն-2016 միջազգային մրցույթին, որին ներկայացված էին 7 թիմ՝ Հայաստանից, Վրաստանից, Ղազախստանից, Ղրղզստանից, Տաջիկստանից, Ուզբեկստանից և Ուկրաինայից:

Միջազգային այս մրցույթում Beeline-ի աշխատակիցների թիմը իր՝ ամպային խաղերի ոլորտում միանգամայն նոր լուծում հանդիսացող BeeForce ծրագրով ճանաչվեց լավագույնը:

*«Մենք ցույց տվեցինք, որ Հայաստանում կապի միասնական օպերատոր Beeline ը, որն ունի ամենահարուստ պատմությունը բիզնես միավորում,*

# Տորարարության և բարձր տեխնոլոգիաների զարգացմանն ուղղված ծրագրեր

*վստահ գնում է առաջ դեպի թվային աշխարհ, և մենք միանշանակ կարող ենք առաջարկել ժամանակակից լուծումներ մեր հաճախորդների համար»:*

Հայաստանում Beeline-ի Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախին:

## «Թվապատում 2016»

2016-ի սեպտեմբերին Beeline-ը հովանավորեց «Թվապատում 2016» միջոցառումների շարքը՝ բաղկացած թվային միջավայրում ստեղծվող լրագրողական պատմություններին նվիրված կոնֆերանսից և մրցույթից: Տարբեր երկրներից հրավիրված մասնագետների քննարկումներն ու զրույցները հիմնականում ծավալվում էին հետևյալ կարևորագույն թեմաների շուրջ՝ հետաքննական լրագրություն, հակամարտությունների լուսաբանում, մեդիայի նոր գործիքներ ու միտումներ:

Երկօրյա կոնֆերանսին հաջորդեց «Թվապատում 2016». պատմություններ փոփոխությունների մասին լրագրողական մրցույթի մրցանակաբաշխության արարողությունը, հայտարարվեցին հաղթողները՝ ութ անվանակարգերում և խրախուսական մրցանակների արժանացած լրագրողները:

# 4

# Երիտասարդության և կարիերայի խթանմանն ուղղված ծրագրեր

*«Beeline-ն իր կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ներքո իրականացվող ծրագրերում առանցքային տեղ է հատկացնում երիտասարդներին և այն բոլոր նախաձեռնություններին, որոնք կօգնեն փոխել նրանց կյանքը դեպի ավելի լավը»:*

Հայաստանում Beeline-ի Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախին:

# Երիտասարդության և կարիերայի խթանմանն ուղղված ծրագրեր

## Սոցիալական գործընկերության յոթերորդ ազգային կոնֆերանս

Beeline-ի աջակցությամբ կայացավ Սոցիալական գործընկերության 7-րդ ազգային կոնֆերանսը՝ նվիրված «Ընդլայնված հնարավորություններ երիտասարդների համար» թեմային: Կոնֆերանսի հիմնական նպատակն է խթանել եռակողմ սոցիալական գործընկերությունը և սոցիալական երկխոսությունը ՀՀ–ում պետական մարմինների, աշխատողների և գործատուների միջև՝ կայուն աշխատաշուկայի ձևավորման համար:

2016-ի դեկտեմբերին Beeline-ն աջակցեց Երիտասարդության և ուսանողների

# Երիտասարդության և կարիերայի խթանմանն ուղղված ծրագրեր

Միջազգային կապերի ու փոխանակման հայկական կենտրոն (ACE՝ ամերիկյան CIEE կազմակերպության պաշտոնական ներկայացուցիչը Հայաստանում) հասարակական կազմակերպության միջոցառումների անցկացման շարքին: Միջոցառումների շրջանակում ներկայացվեցին «Work & Travel» և «Internship» ծրագրերը, որոնք հնարավորություն են տալիս Հայաստանի ուսանողներին և երիտասարդ մասնագետներին ձեռք բերել աշխատանքային փորձ և մասնագիտական վերապատրաստում միջազգային կազմակերպություններում, տեղի ունեցան հարցազրույցներ գործատուների և մասնակիցների միջև:

Հայաստանում Beeline-ի ղեկավար անձնակազմի ներկայացուցիչները պարբերաբար հանդես են գալիս դասախոսություններով Երևանի տարբեր ուսումնական հաստատությունների ուսանողների համար:

2016-ին Երևանի Պետական Համալսարանի Սոցիոլոգիայի ֆակուլտետի հեռաուսուցման լաբորատորիայի՝ Մարքեթինգի և Հասարակայության հետ կապերի ոլորտում վերապատրաստման մեկամյա դասընթացի մասնակիցների համար՝ Հայաստանում Beeline-ի Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախինը կարդաց «Ինչպե՞ս է ստեղծվում Beeline–ի սակագները և ծառայությունները» թեմայով դասախոսություն, իսկ PR դպրոցի ուսանողների համար հանդես եկավ «Ինչպե՞ս կառավարել ղեկավարին» թեմայով դասախոսությամբ:

# Երիտասարդության և կարիերայի խթանմանն ուղղված ծրագրեր

## Generation Z

**2016-ին Beeline-ը ազդարարեց Generation Z բոլորովին նոր և բացառիկ ծրագրի մեկնարկը:**

> *«Generation Z ծրագիրը համահունչ է Թող քո հետքը» մեր գլոբալ ռազմավարությանը, որի շնորհիվ մենք հնարավորություն ենք տալիս երիտասարդներին իրենց ուժերով փոխել կյանքը դեպի ավելի լավը»:*

**Հայաստանում Beeline-ի Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախին:**

# Երիտասարդության և կարիերայի խթանմանն ուղղված ծրագրեր

**Generation Z ծրագրի շրջանակում Beeline-ը եզակի հնարավորություն կընձեռի ավագ դպրոցների և ԲՈՒՀ-երի լավագույն ուսանողներին՝ աշխատելու Հայաստանի խոշորագույն ընկերություններից մեկում, կառաջարկի նրանց 4-ժամյա աշխատանքային օր և աշխատավարձ:**

> *«Այսօր աշխատանքի շուկայում պայքար է մղվում տաղանդների համար: Յուրաքանչյուր ընկերություն ցանկանում է, որ իր մոտ աշխատեն վառ, նորարար և նպատակասլաց երիտասարդ աշխատակիցներ: Սակայն հատկանշական է, որ ոչ բոլոր ընկերություններն են պատրաստ աշխատել աճող սերնդի հետ, ովքեր տարբերվում են իրենց վարքագծով և առաջնահերթություններով»:*

**Հայաստանում Beeline-ի Մարդկային ռեսուրսների կառավարման և կազմակերպական զարգացման տնօրեն Մարինե Գալստյան:**

# 5

# Համայնքների զարգացմանն ուղղված ծրագրեր

*«Beeline-ի սոցիալական պատասխանատվության հիմնական նպատակն է իրականացնել այնպիսի ծրագրեր, որոնք կնպաստեն մարզերի հավասարաչափ զարգացմանը»:*

Հայաստանում Beeline-ի Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախին:

# Համայնքների զարգացմանն ուղղված ծրագրեր

2016-ին Beeline-ը բազմաթիվ ծրագրեր իրականացրեց, որոնք նպաստեցին մարզերի և համայնքների զարգացմանը, իրազեկությանը, երեխաների և երիտասարդների կրթության բարելավմանը և մշակութային կյանքի հարստացմանը:

Մարզերի զարգացմանն ուղղված կարևորագույն նախագծերից մեկն էր «Տատիկից զինվորին» ծրագիրը, որը Beeline-ն իրականացրեց «Հայրենիքի դարպասներ» սոցիալական-հասարակական կազմակերպության հետ համատեղ: Նախագծի հիմնական նպատակն էր սնունդով և հագուստով ապահովել որևէ սահմանային զորամասի զինծառայողներին:

# Համայնքների զարգացմանն ուղղված ծրագրեր

Ծրագրի շրջանակում Կողբի սահմանային զորամասի զինծառայողները ստացան հագուստ և թխվածք՝ պատրաստված Ռսկեվան, Կոթի և Բարեկամավան սահմանամերձ գյուղերում բնակվող տատիկների կողմից: Նախաձեռնությանը միացել էին նաև Beeline-ի կողմից հովանավորվող «Սահմանամերձ գյուղերի երեխաները Թումոյում» նախագծի մասնակիցները, ինչպես նաև Երևանում բնակվող քաղաքացիներ և մի շարք կազմակերպություններ:

*«Տատիկից զինվորին» ծրագիրը համարում եմ կրկնակի հաջողված, քանի որ նախագծում ընդգրկվեցին մեր մյուս ծրագրի մասնակիցները»:*

Հայաստանում Beeline-ի Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախին:

6

# Make your mark / Թող քո հետքը

**2015-ին «ՎԵՈՆ»-ը որդեգրեց «Make your mark»/«Թող քո հետքը» գլոբալ սոցիալական ռազմավարությունը, որը հանդիսանում է ընկերության կորպորատիվ սոցիալական պատասխանատվության առանցքային բաղադրիչը:**

*«Թող քո հետքը» գլոբալ ռազմավարության շնորհիվ Beeline ը շարունակում է իրագործել այնպիսի սոցիալական ծրագրեր, որոնք երիտասարդ սերնդին օգնում են սեփական ուժերով փոխել կյանքը դեպի ավելի լավը»:*

Հայաստանում Beeline-ի Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախին:

## Make your mark | Թո՛ղ քո հետքը

make your mark | helping young people shape their future

2016-ին «Make your mark» ռազմավարության շրջանակում Beeline-ն իրականացրեց մի շարք ծրագրեր՝ ուղղված Հայաստանում կրթական ոլորտի բարելավմանը, աշխատաշուկայում երիտասարդների մրցունակության և կարիերայի խթանմանը, մասնագիտական գիտելիքների կատարելագործմանը, նորարարության և երիտասարդների բիզնեսի զարգացմանը, ինչպես նաև մարզերի և համայնքների առաջընթացին:

# Make your mark | Թո՛ղ քո հետքը

## «Eurasia Mobile Challenge»

«Eurasia Mobile Challenge» մրցույթը երկրորդ տարին անընդմեջ անցկացվում է «ՎԵՈՆ»-ի կողմից «Make Your Mark» («Թող քո հետքը») սոցիալ-կրթական ռազմավարության շրջանակում և նպատակ ունի ներգրավել երիտասարդների, ովքեր կարող են առաջարկել նորարար միջոցներ՝ ուղղված սոցիալական խնդիրների լուծմանը:

Մրցույթին մասնակցեցին ներկայացուցիչներ Հայաստանից, Վրաստանից, Ռուսաստանից, Ղազախստանից, Ուկրաինայից, Ղրղզստանից, Տաջիկստանից և Ուզբեկստանից:

# Make your mark | Թո՛ղ քո հետքը

Հայաստանյան փուլի մրցույթի մասնակիցների համար կազմակերպվեցին մի շարք դասընթացներ թվային տեխնոլոգիաների, նորարարության և ձեռնարկատիրության վերաբերյալ: Բացի դրանից Beeline-ը Vector օնլայն դպրոցի հետ համատեղ գործարկեց կրթական ծրագիր հատուկ Eurasia Mobile Challenge-ի մասնակիցների համար: Ստեղծվեցին երկու օնլայն դասընթաց՝ «Ինչպես ստեղծել բջջային հավելված» և «Ֆինանսական գրագիտություն ձեռներեցների համար», որոնք հասանելի էին ոչ միայն հայաստանյան մասնակիցներին, այլև եվրասիական փուլին մասնակցող բոլոր երկրների թիմերին:

2016-ին եվրասիական մրցույթի կիսաեզրափակիչն առաջին անգամ անցկացվեց Երևանում: Կիսաեզրափակչին մասնակցեցին 24 թիմ ութ մասնակից երկրներից, որոնք ներկայացրեցին իրենց գաղափարները 11 հոգուց բաղկացած



# Make your mark | Թո՛ղ քո հետքը

ժյուրիի անդամներին, որի կազմում էին համաշխարհային առաջատար կազմակերպությունների միջազգային և տարածաշրջանային թվային ոլորտի ձեռներեցներ, գլոբալ ինվեստորներ և «Վիմպելկոմ»-ի բարձրաստիճան ղեկավարներ: Տարածաշրջանային կիսաեզրափակչում հայատանյան Earlyone թիմը զբաղեցրեց երկրորդ տեղը:

## «ՀՀ աշխատաշուկայում երիտասարդների մրցունակության բարձրացում» ծրագիր

Beeline-ը Հայաստանի գործատուների հանրապետական միության (ՀԳՀՄ) հետ համատեղ՝ «Make your mark» գլոբալ ռազմավարության շրջանակում, իրագործեց «ՀՀ աշխատաշուկայում երիտասարդների մրցունակության բարձրացում» խորագրով ծրագիրը, որի նպատակն է ոչ միայն խթանել

երիտասարդների սեփական բիզնեսը հիմնելու և վարելու գործընթացը և բարձրացնել մրցունակությունն աշխատաշուկայում, այլև նպաստել զբաղվածության աճին և աշխատանքային միգրացիայի կանխարգելմանը:

Ծրագրի առաջին փուլին մասնակցած ավելի քան 350 երիտասարդներից՝ Երևանից և մարզերից, երրորդ փուլում ընտրվեցին լավագույն 20 մասնակիցները, ովքեր հնարավորություն ստացան սկսել իրենց սեփական բիզնեսը Beeline-ի աջակցությամբ:

*Ծրագրի ավարտին մասնակիցների համար «Թվային տրանսֆորմացիան կառավարման մոդելներում» դասախոսությամբ հանդես եկավ Հայաստանում Beeline-ի Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախինը:*

## «Ձեռնարկատիրական մտածելակերպի զարգացում» ծրագիր

Beeline-ը Հայաստանի գործատուների հանրապետական միության (ՀԳՀՄ) հետ համատեղ՝ «Make your mark» գլոբալ ռազմավարության շրջանակում, իրագործեց «Ձեռնարկատիրական մտածելակերպի զարգացում» ծրագիրը, որի նպատակն է զարգացնել ձեռնարկատիրական գիտելիքների ուսուցումը և ձեռնարկատիրական մտածելակերպի զարգացումը հայ դպրոցականների շրջանում:

# Make your mark | Թո՛ղ քո հետքը

Ընդհանուր թվով ծրագրին մասնակցեցին շուրջ 200 աշակերտներ, ովքեր ձեռք բերեցին ձեռնարկատիրության վերաբերյալ գիտելիքներ և հմտություններ՝ գործնական պարապմունքների, խաղերի և պրակտիկ աշխատանքների միջոցով: Ծրագրի շրջանակում Երևանի և Գյումրու երկու դպրոցներում տեղադրվեցին նորարար սարքեր «Տեխնոլոգիա» դասի համար, ուսուցիչներն անցան վերպատրաստման դասընթացներ:

## «Թվային տեխնոլոգիաների հետ աշխատելու հմտություններ երիտասարդների համար» ծրագիր

Beeline-ի և «ՍՕՍ մանկական գյուղեր» բարեգործական հիմնադրամի համագործակցության արդյունքում իրականացվեց «Թվային տեխնոլոգիաների հետ աշխատելու հմտություններ երիտասարդների համար» ծրագիրը:

# Make your mark | Թո՛ղ քո հետքը

Ծրագրի շրջանակում «ՍՕՍ մանկական գյուղեր» բարեգործական հիմնադրամի «Իջևան» մասնաճյուղում բացվեց համակարգչային լսարան, որտեղ երիտասարդներն անցան վեբ դիզայնի և գրաֆիկ դիզայնի դասընթացներ:

Մեկ տարվա ընթացքում չորս փուլով անցկացված դասընթացներին մասնակցեցին ընտրված 60 երիտասարդներ սոցիալապես խոցելի ընտանիքներից:

# BEELINE-Ի ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ «ՀԱՅԿԱԿԱՆ ՓԻ ԱՐ ԱՍՈՑԻԱՑԻԱՆ» ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՀԻՄՆԵՑ PR ԱՋԳԱՅԻՆ ՄՐՑԱՆԱԿ

Մրցանակաբաշխության նպատակն է համակարգել Հայաստանում հանրային կապերի (PR) ոլորտում իրականացվող լավագույն ծրագրերը, ինչպես նաև ըստ արժանվույն գնահատել հանրային կապերի մասնագետներին՝ նպաստելով Հայաստանում PR մշակույթի ձևավորմանն ու զարգացմանը:

Մրցանակաբաշխությունը նվիրվում է Հայաստանի և Արցախի անկախության 25-ամյակին:

**Հայկական PR մրցանակաբաշխության գլխավոր հովանավորն է Հայաստանում Beeline-ը՝ կապի առաջատար օպերատոր, որն ունի լավագույն փորձերից մեկը PR ոլորտում:**

**Հետազոտությունների արդյունքում առանձնացվեց երեքական թեկնածու, կառույց և նախագիծ մրցանակաբաշխության 13 անվանակարգերից յուրաքանչյուրի համար:**

> *«Հանդիսանալով երկրի հեռահաղորդակցության խոշորագույն օպերատորի ղեկավար՝ իմ փորձով բազմիցս համոզվել եմ, որ հաջողության հասնելու գործում անհրաժեշտ է կայացնել ճիշգրիտ որոշումներ, ընտրել ճիշտ մոդելներ՝ հաղորդակցություն կառուցելու ժամանակ: Կարևորելով այն, որ հանրային կապերի դերը շարունակաբար աճում է և արհեստավարժ մասնագետները գնալով ավելի գնահատված և պահանջված են դառնում շուկայում, շատ ուրախ եմ, որ հենց Beeline է ստանձնել այս ոլորտի աջակցությունը»:*
>
> **Հայաստանում Beeline-ի Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախին:**

**Հանրային կապերի ոլորտում առաջին անգամ իրականացվող հետազոտությունը հնարավորություն տվեց վերլուծելու Հայաստանում անկախացումից հետո մասնագիտական ձեռքբերումները, պարզելու ոլորտում առկա խնդիրներն ու բացթողումները՝ նպաստելով հանրային կապերի մասնագետի կրթմանն ու արժևորմանը:**

# Հաճախորդների բարօրությանն ուղղված ծրագրեր

# Հաճախորդների բարօրությանն ուղղված ծրագրեր

**In 2016 Beeline gave the opportunity to all the citizens of Armenia to call for free via Beeline cardphones to the Beeline fixed network throughout Armenia. Now it is possible to call via cardphones both with a card and without it.**

**It is worth noting that more than 400 Beeline cardphones are currently active throughout Armenia.**

*"Our initiative of calling for free via cardphones has a pronounced social component and once more proves our love and care towards the consumers".*

Andrey Pyatakhin, CEO of Beeline Armenia



**Հայաստանի զարգացման գործում ունեցած զգալի ավանդի համար՝ Հայաստանում Beeline-ի Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախինի պատվին բացվել է անվանական տառ:**

**«Հայոց գրերի երթ» նախագիծի շրջանակում հայկական այբուբենի անվանական տառեր են ստացել Հայաստանի զարգացման գործում զգալի ներդրում ունեցած հասարակական, մշակույթի և պետական գործիչները: Իր անվանական տառն այժմ ունի Անդրեյ Պյատախինը:**

*«Անչափ շոյված եմ իմ և Հայաստանում Beeline-ի գործունեությանը տրված նման բարձր գնահատականի համար և ես չեմ կարող թաքցնել հպարտության զգացումն այն զգալի ներդրման համար, որը կատարել է Beeline-ը Հայաստանի զարգացման գործում՝ իր բարեգործական և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության նախագծերով: Երիտասարդություն, երեխաներ, կրթություն, թվային նախագծեր, բջջային տեխնոլոգիաներ և հայալեզու հավելվածներ, երաժշտություն և մշակութային նախագծեր երեխաների համար. սա միայն կարճ ցանկն է մեր ծրագրերի ուղղությունների, որոնք մենք իրագործում ենք գրեթե Հայաստանի ողջ տարածքում»:*

**Հայաստանում Beeline-ի Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախին:**

# Գործընկերները մեր մասին

# Գործընկերները մեր մասին

*“The majority of young participants of the “Sail of Hope” festival had the opportunity to introduce their talent to a wider public, choose a new path in the field of bard music and be appreciated due to Beeline Armenia and other sponsors, for which I am grateful both myself and on their behalf.”*

**Vakhtang Harutyunyan, Director of Civil Art social organization**

*“We hope that due to our cooperation talented young people throughout the country will be able to find their way in arts and strengthen their capabilities. There is no doubt that all this becomes possible especially due to the support of Beeline, a company, which has been with us for already 5 years.”*

**Karen Shahgaldyan, Violinist of the Khachaturyan Trio**

*“We are happy to collaborate for three years in a row with Beeline, whose activities are significantly aimed to charity as well.”*

**Musicians of the String Quartet after Edward Mirzoyan**

# Գործընկերները մեր մասին

*“This year by cooperating with Beeline Armenia we are trying to elaborate interesting and creative solutions concerning the problems of communications, which might become demanded products in the future.”*

**Artashes Vardanyan, Director of Microsoft Innovation Center Armenia**

*“On behalf of RUEA I express my gratitude to Beeline Armenia, a company, which stands out in Armenia by various corporate social programs and the best practice of business management.”*

**Gagik Makaryan, Executive manager of Republican Union of the Employers of Armenia**

*“Last year also under the sponsorship of Beeline a lot of children participated in the educational programs of the Cafesjian Center for the Arts and made acquaintance with various exhibitions and works of the Armenian artists in a new way in the museum environment.”*

**Vahagn Marabyan, Acting executive director of the Cafesjian Center for the Arts**

# Գործընկերները մեր մասին

*“It is remarkable, that our partner Beeline attaches great importance to the organization of suchlike programs and stimulates the process of inclusion of children with special needs living in the provinces to the society. I would like to express my deepest gratitude to Beeline Armenia, especially to the CEO of Beeline Armenia, Andrey Pyatakhin for the huge contribution in the field of development and education of children, and the PR-team of Beeline Armenia for the long-lasting and productive cooperation.”*

**Lusine Simonyan, Director of the Child Development Foundation**

Beeline®